



ՏԵՐԵՆ

Հ. ԿԱԿԱԳՆԱՆ



ԻՍԼԱՄԱԳԻՏԱԿ

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ




ԹԻԻ
39.



ԿՐԴԱՆԵՐԸ

ԱԼՓԱՍԼԱՆ
Յ. ԱԼՓԱՐ
Ե. ԲՈԼԱՅԵԱՆ
ՋԱՋԱ
Ս. ՍԱԲԱՆԱՆ
Ա. ՄԱՐԿԵԱՆ

ԵՒ

ԼԻԼԱ







ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ—ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 39

ՀԻՆԳՇԱԲԹԻ

22 ՄԱՅԻՍ 1908

ԽԱՌՆԱՅԱՆԳ ՏՈՂԵՐ

ՍԻՐԵԼԻ ՎԱՀԱՆ

« Հանրագիտակ » իդ մեզ, նուրբ, élégant,
 իմ խաղողներս երբ տեղ բռնել եկան,
 եւ երբ տեսայ որ զանոնք իբրեւ ... croûte,
 ձառակել կուտաս ընթերցողներուդ,
 Այնքան գոհ եղայ որ, փութով extrême
 Ուզեցի որ նոր, շիք բան մը գրեմ,
 Սրամբսութեամբ լեցուն fantaisie
 Նրման վարդերու, մեխակի դեղի,
 Կամ համով հոտով զրգուիչ ananas,
 Որմէ նախ դուն մեծ հաճոյք մ'իմանաս
 եւ յետոյ կարդան զայն եւ haut la main
 Ախորժին անկէ ընթերցողդ ամեն ... :
 Բայց, աւա՛ղ, միտե՛ս, ah! quel cruel sort!
 Երկու սիրուն խօսք դուրս չի գար այսօր ...
 եւ հակառակ իմ կամքիս ... magnanime,
 Տե՛ս, լոկ խառնայանգ սա՛ն տղերն ունիմ
 Որք անարժան են կրելու chapeau,
 Շարեցի զանոնք արագ, ափյափոյ,
 Ու քեզ կը դրկեմ, սիրելիս, pardon !
 Շնորհաւորելով Ս. Համբարձման Տօն ... :

Ա.Լ.ՓԱՍՏԻՍԵ

ՄԵԾԱԳՈՅՆ ՊԱՏՈՒՀԱՄԸ

ԱՄԷՆ ԱՆՈՆՑ . . .

Գաղափար չունիք թէ որքան դժուար բան է, ստիպուած ըլլալ մէկ օրէն միւսը, դու քու մէջդ խեղդել, ոչնչացնել՝ քառասուն տարիներէ ի վեր սնուցած, շոյած գըգնուած մէկ հաւատքդ, որ եւ է մէկ համոզումդ:

Անշուշտ ես ալ յանցաւոր չեի եթէ շատ ուրիշներու պէս, սա համոզումը գոյացուցած էի թէ ամուսնական երջանկութեան տեսակետով, ամէնէն դրական, ամէնէն հաստատ պայմանը . . . տգեղ կին մը առնելն էր:

Կեանքի փորձառութիւնը ունեցող մարդիկ, այրեր որոնց բերանը այրած է եւ ճակատը ուռեցած, չեն կրկնէր միթէ ամէն օր քա վհատեցուցիչ յանկերգը:

— Տղաք, եթէ կուզէք ամուսնութեան մէջ երջանիկ ըլլալ, նայեցէք որ աղւոր կընիկ չառնէք:

Այս յուսախափ եւ հմայաթափ եղած արարածներուն համար նիւթական ապահովութիւնը Զէթուտի դրամարկղերը միայն կըրնային տալ եւ բարոյական ապահովութիւնը . . . կիները որ աղւոր չեն:

Ամուսնութիւնը՝ հրդեհի չափ վտանգաւոր նկատողներու համար գեղեցիկ կին մը ունենալը՝ փայտաշէն տան մը մէջ բնակելու կը նմանէր եւ տգեղ կին մը ունենալը՝ քարաշէնի:

Տգեղ կնկան մը էրիկը ըլլալը եւ ամբողջ հարստութիւնդ անգլիական քօնսօլիտէի վերածելը մի եւ նոյն բանն էր. գիշերը հանգիստ կը քնանայիր . . . եթէ տիկինը ռնգեղջիւրի մը պէս չի խորդար:

Տգեղ կին մը ունենալը՝ գիշերը խանութը բաց ձգելու կը նմանէր, գողեր չէին մտներ:

Պարապ խօսքեր են եղեր ուրեմն այս ամէնը, ունայնութիւն:

Քառասուն տարի շարունակ այս սկզբունքները իբրեւ argent comptant ընդունելէս ետքը, ամուսնութեան վրայ այդ փրկաւէտ հաւատքը գոյացնելէս յետոյ, հեշտալի բան չէ, կուզէք հաւատացէք կուզէք ոչ, յանկարծ փչրել, անէացնել այդ դաւանանքդ

եւ համոզուիլ թէ այդ ամէն յոռետեսները խաբուած են, ըսածնին չեն գիտեր եւ կը զառանցեն պարզապէս: Տգեղ կիները էրիկներն չեն խաբեր եւ կամ ինչ որ աւելի ճիշտ է չեն կրնար խաբել եղեր, ինչ սուտ, ինչ պարապ խօսք:

Քիւլպի պարտէզին մէջ տեղի ունեցած scandaleը ամէնէն հերքող ապացոյցն է տգեղ կիներուն ակամայ պարկեշտութեան վրայ մեր ունեցած հաւատքին:

Տիկին X-ի ալ comf ընող կըլլան եղեր, հաւատալիք բան չէ ասիկայ եւ սակայն scandale ցայտուն եւ կարկառուն դեռ հոն է:

Իբրեւ տգեղ՝ Տիկին X մարդու բան չի հարցնէր, բայց առածը սուտ չէ, գորտին աչքերուն ալ սիրահարողներ կան եղեր . . .

Այդ իրիկունէ ի վեր, իմաստուն եւ գեղեցիկ խօսքերու շարքին մէջ հատ մը եւս կրնանք աւելցնել:

«Տգեղ կիներ չիկան, այլ անհաւատկ մարդիկը ցաւ են»:

Ուրեմն, քանի որ տգեղ կինն ալ պատուար մը չէ ամուսնական այդ չարափաստիկ անպատեհութեան դէմ, ինչ քաջութեամբ կուզէք որ ամուսնական մարդիկ: Տիեզերքի խելքը մէկէ աւելի միջոցներ գտած է զերծ պահելու համար մարդկութիւնը տեսանելի եւ անտես վտանգներէ, աղէտներէ, պատուհասներէ եւ մարդասիրական իր այդ մեծ հոգածութեան մէջ գտած է Ապահովագրական ընկերութեանց դրութիւնը, որոնց ընծայած բարիքները թուել շատ նոր բան մը չի պիտի ըլլար:

Ապահովագրական ընկերութիւններ՝ ընդդէմ հրդեհի, մահուան, ծովային արկածներու, երկրաշարժի, փոթորիկի, ողողումներու, երկաթուղիի, թրամվէի եւ օթօմոպլիթ արկածներու, տեսակ տեսակ հիւանդութիւններու, արկածալից ճամբորդութեանց, գողերու պատկառելի եղբայրակցութեան, ապակիներու եւ հայկիներու խորտակման, որսորդութեան եւ ձկնորսութեան մահատուտ նակնկալներուն եւ վերջապէս ընկերութիւններ՝ ամէն տեսակ վտանգներու, ցաւերու դէմ կան եւ կը մնան:

Միակ հատ մը կը պակսի: Ինչո՞ւ համար արդեօք չեն մտածած տակաւին մեծ դրա-

մագլուխով ընկերութիւն մը հաստատել փրկելու համար էրիկ մարդիկը՝ իրենց կիներու անհաւատարմութեան վտանգէն, անոնք ալ մեղքը՝ չեն: Թող կազմեն վաղը ընկերութիւն մը՝ որուն անունը ըլլայ «L'anticorne» société anonyme d'assurance contre l'infidélité des femmes, և տեսէք թէ որքան պիտի պակսի ամուրիներու թիւը:

Երկու երկուք ալ չորս կընէի պէս պարզ է ըսածս, չէ՞ք կարծեր:

Ձուրը, կրակը, հովը, շանթը, երկրաշարժը այնքան մեծ հասցուցած չեն մարդկութեան՝ որքան կնոջական անհաւատարմութիւնը: Որքան ոճիրներ, որքան աւերումներ, ի՞նչ յուսահատական արարքներ գործուած են անոր երեսէն: Այդ աղէտը ի՞նչ տուններ կործանած է, որքան ճրագներ մաքած, ինչ կեանքեր կրճատած, ինչ յոյսեր խորտակած, ինչ ապագաներ ջախջախած և որքան արցունքներ թափել տուած է: Մտածելը միայն սոսկում մը կը դնէ ամբողջ մարմնոյդ մէջ: Եւ այդ աղէտէն խուսափելու ճար մը չի գտնուիր դեռ: Օղապարիկին ղեկէն առաջ, թող ասիկայ փնտռեն անոնք որ իրենց նմաններուն օգտակար ըլլալու սուրբ հուրը կը պահեն ներսիդինին:

L'Anticorneը պիտի փրկէ զմեզ փորձութեանց ամէնէն մեծէն:

Այս պատուական գաղափարով տոգորուած և ես ալ կեանքիս մէջ բան մը ըրած ըլլալու մարմաջով երէկ կը դիմեմ ամէնէն բանիբուն, ամէնէն պատուաւոր, ամէնէն շատ ծանօթ մէկ ապահովագրական ընկերութեանց գործակալի մը, և իր կարծիքը կը հարցնեմ, այս տեսակ ձեռնարկութեան մը կարելիութեան վրայ: Սիրալիր ընդունելութեան մը և գաւաթ մը սուրճէ ետքը կսկըսինք կարծեաց փոխանակութեան:

Մեր խորհրդակցութիւնը գրեթէ ժամ մը տեւեց, որմէ յետոյ սա եզրակացութեան յանգեցանք որ ատանկ ընկերութիւն մը յաջողութեան որ և է հաւանականութիւն չունէր:

— Ինչպէս որ, կըսէ Պ. գործակալը, հիմայ հրդեհի դէմ ընկերութիւնները շատ կը մշտաւորին, որովհետեւ ապահովագրեալները իրենք իրենց ձեռքով կրակ կը դնեն կոր, կը վախճան որ էրիկներ ալ պիտի գտնուին,

— տրուած ըլլալով արդի անկեալ տգեղ բարքերը — որ մեր նոյն իսկ արգիլել ուզած վտանգը իրենք իրենց ձեռքով պատրաստեն աջակցութեամբ բարեկամներու qui ne demandent pas mieux և ասիկայ գրպանելու ապահովագրութեան գումարը: Եւ յետոյ սա անպատեհութիւնն ալ կայ որ, երբ տուն մը կապահովես կրակի դէմ, տունդ որքան լաւ չիսուած, որքան աղւոր, որքան հաստատ ըլլայ՝ primeը այնքան քիչ կը վեճարես, բայց Anticorneի պայմանները բնականաբար տարբեր պիտի ըլլան, որքան կինդ աղւոր ըլլայ, առողջ և դիմացկուն, պէտք է որ primeը այնքան սուղ ըլլայ: Տեսա՞ք հիմայ տարբերութիւնը:

— Ուրեմն, կը կարծէք թէ որ և է միջոց մը չի կայ այդ վտանգէն դերձ մնալու համար:

— Ընդհակառակը. ես սա հաւատքը ունիմ թէ՛ ամուսնական այդ պատուհասէն դերձ մնալու համար մէկ ճամբայ մը, մէկ ելք մը, մէկ միջոց մը կայ:

— Ո՞րը:

— Ամուրի մնալը:

Թերեւս իրաւունք ունի մարդը, բայց իմ կարծիքս տարբեր է:

Ինչպէս որ մարդիկ կան որ կեանքներուն մէջ երբեք սանթիմ մը չեն վճարած որ եւ է հրդեհի դէմ ընկերութեան մը, որովհետեւ տան տէր չեն եղած, այլ միշտ վարձքով նստած են, նոյնպէս ամուսնութեան մէջ...

Առժամանակեայ կիւն մը կը գտնես, որուն հետ կը պայմանաւորես այսքան ատեն միասին կենակցելու, ճիշդ այնպէս՝ ինչպէս որ կընես տուն մը բռնած միջոցիդ: Վեց ամիս, տարի մը, երկուք այսպէս կերթաս, Սիկուրթայի պէտք չի կայ... այրի նէ թող այրի:

6. ԱՆՓԻՍԻ

ԿԱՐԵՒՈՐ

Ի գիտութիւն մեր արտասահմանի Պատ. Բաժանորդաց, անգամ մ'ընդ միշտ կուգանք յայտարարել թէ, տարեկան բաժնեգիրները փոխանակ 12ի՝ 14 Ֆր.ի բարձրացուցած ենք ակամայ, նկատելով որ մէկ թերթ տասը փարայի կը ղրկուի բոսթայով և որ 13 ղրջ. կը բռնէ 52 թիւի համար:

ԲԵՐԱՑԻ ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

Հակառակ ատեն մը չի գրելու որոշմանս, Հանրագիտակի Պատ. Խմբագրութիւնը օր առաջ անարժան անունս ալ ծանուցած ըլլալով ի չարս ծանօթ աշխատակիցներու, յարգանքի պակաս մը չընելու համար՝ պըզտիկ զարտուղութիւնով մը կուգամ գրաւել այս անգամ ալ թերթին մէկ երկու սիւնակները:

Ամէն գրող՝ օրուան նիւթ մը կը փնտռէ, ու ես, իբրեւ իրենց մէկ հետեւակը, օգտուելով առիթէն՝ Համբարձման Հինգշաբթիին սիրուն այլ յուզիչ մէկ յիշատակը կը փութամ հրամցնել ամէն անոնց՝ որոնք սիրային պատմուածքներէն կախորժին:

Այո՛, ճիշդ Համբարձման Հինգշաբթիին էր երբ Հէրմիոնէին հետ՝ (իւր բուն անունը տալ չուզելուս համար) Մեծ Կղզիի չամբուռն տակ նստած էինք քով քովի, դիտելով ընդարձակ ու միապաղաղ Մարմարան, որ մեր ոտքերուն տակ կը ծփար վերջալոյսի բեկբեկուն լոյսերուն ներքեւ:

Հէրմիոնէի ծանր հիւանդութենէն վերջ, բժիշկները խորհուրդ տուած էին/այն տարին Մեծ Կղզի օդափոխութեան տանել, և գրեթէ Զատիկական քառասունքին հետ՝ խեղճ աղջկան քառասունքն ալ աւարտած ըլլալով, այդ օրը քիչ մը դուրս կրցեր էինք հանել, լաւ մը պատսպարելով անոր նուրբ մարմինը: Մեկնելու համար իրիկնամուտի զովութեան կսպասէինք, ես և ինքը, ուրիշ ոչ ոք ունէինք իբր ընկեր:

Հէրմիոնէ՛ տասն եւ ութը տարեկան աղջիկ մ'էր, հարուստ ծնողաց մէկհատիկը, որ իւր ուսումը փոխանակ դպրոցներու մէջ առնելու, իր հեռատես ծնողքը՝ զայն տանը մէջ կրթել և ընտանի վառարանին մօտ տալ ուզած էին անոր պէտք եղած միջակ դաստիարակութիւնը, և այդ պաշտօնին կոչած էին զիս, որ այն ատեն առտնին դասախօսութեամբ կը պարապէի:

Ծայր աստիճան լրջութեան, առողջ նը-

կարագրի և աներեւակայելի ամօթխածութեան տէր այդ հրեշտակը, երկու տարի շարունակ ըստ բաւականի հայերէնը սովորած ըլլալով՝ դադարեցուց, և վեց ամիսէ ի վեր ֆրանսերէնի սկսած էր մարսէյէզ օրիորդէ մը, որ ան ալ իւր կարգին՝ չաբաթը երկու անգամ կայցելէր ինձ պէս, սա տարբերութեամբ որ՝ ես իբր մտերիմ ու բարեկամ կայցելէի, իսկ մատմագէլը՝ իբր վարձուոր դասախօս:

Վիճակի հինգշաբթին, ուզելով անգամ մը տեսնալ աշակերտուհիս, Կղզի գացած էի և ծնողական ջերմ թախանձանքներուն չի կըքնալով դիմադրել՝ հետս առած էի խեղճ աղջիկը, չամբուռ կենդանարար բոլրէն ու թոյրէն օգտուելու համար, ըստ բժշկական յանձնարարութեան:

Արեւը տակաւ կը ծածկուէր հրդեհուած հորիզոնն ի վար, բայց հակառակ մեկնելու համար ըրած առաջարկներուս, Հէրմիոնէ ծառերուն խորը ձգած իւր տկար աչքերը կը մերժէր, քիչ մ'ալ վայելելու փափաքը յայտնելով:

Քառորդ ժամ մը այսպէս անցաւ, մինչ հայրիկին ու մայրիկին սիրտ հատնուով մը տաբերելով՝ անհանգիստ կըլլայի իմ կարգիս, և ատեն ատեն ոտքի ելլալուս՝ պաղատագին կը բռնէր թեւերէս ու կարգիւէր:

Յանկարծ ուժով մը ցնցուեցաւ Հէրմիոնէ, և առաջուան հիւանդ աղջիկը, հիմա քառուղե գնդակ մը դարձած էր կարծես:

— Եկա՛ւ ... ա՛հ վերջապէս եկաւ, ըսաւ թրթռուն ձայնով մը, և պահ մը ձեռքերս իրեն կրակ ափերուն մէջ առած՝ աչքերուս մէջ նայեցաւ անխօս:

— Մէկ քանի ամսուան կեանքիս մէջ, առաջին և վերջին անգամը ըլլալով հոգիս, ներէ որ պզտիկ յանցանք մը գործեմ ըսաւ, մինչ ես, յապուշ կրթեալ՝ չէի հասկնար թէ ի՞նչ ըսել կուզէր Հէրմիոնէ:

— Դուք իմ դասախօսս չեա, դուք իմ քոյրս չեա, դուք իմ մտերիմ բարեկամուհիս չեա, դուք իմ պահապան հրեշտակս ես, ըսաւ, աչքէն կաթկթող արցունքի խոշոր կալակները թող տալով որ ձեռքերուս վրայ իջնան: Տե՛ս, Ժիւլիէթը մեր կողմը կուգայ կոր, իսկ անոր ետին ... , ու չի կրցաւ շարունակել, հեծկտուքը՝ ձայնը խեղդուած էր:

Ժիւլիէթ, գիտէի թէ մարսէյէզն էր, իր ֆրանսերէնի դաստիարակունին, բայց հետի շէք գլխարկաւոր երիտասարդը բնաւ տեսած չունէի:

Բայց և այնպէս երկուքն ալ մեր կողմը կուգային:

Մարդ որչափ տխմար եւ ապուշ ըլլալու է որպէս զի մէկ ակնարկով չի կռահէ այս տրամաթիկ հանդիպումին բուն պատճառը:

Երեւակայեցէք իմ վիճակս, կամ վիճակը անոր՝ որուն յանձնուած է անարատ կոյսի մը պատիւը, և զոր անակնկալ կերպով դողերու ճիւղաններուն մատնուած:

Հէրմինէ, սիրային յարաբերութիւն մը ֆատաստած էր այդ երիտասարդին հետ, շընորհիւ մարսէյէզին, և ահա առիթէն օգտուելով՝ կղզիին մէկ ամայի ծոցը տեսութեան յարմար վայր մը նկատած ու հող ոգոյած էին մօտէն բանալ իրենց հրահրող սիրտըն ու սէրը:

Անոնք՝ ալ մօտեցած էին ու Հէրմինէ տըղու մը պէս կուլար բազուկներուս մէջ:

Ի՛նչ պէտք էր ընել, ըսէք, աղի արցունքներուն և հաւատարմութեան զեղծումին մէջտեղ ի՛նչ գիրք, ի՛նչ միջոց պէտք էր բռնել:

Հէրմինէ պահ մը լուռ մնալէն վերջ, իր խոշոր սեւ աչքերը կրկին վեր առաւ, որոնց մէջ կայծակներ ու շանթեր զիրար կը կըտրէին, ահագին փոթորիկ մը կանցներ զոյգ աշխարհներուն մէջ ու անձրեւը, արցունքը ըսել կուզեմ, չէր կրնար մեղմել:

— Իբր պաշտպան, իբր ծնողք, ծնրազիր խղճիդ առջեւ, կաղաչեմ, կարտօնես, որպէս զի երկու խօսքով յայտնեմ անոր վիճակս, գիտցնեմ թէ անկարելի է ինձ համար սիրելը, քանի որ կը զգամ թէ՛ օրերս համբուած եմ, աղատեմ հէք տղան այն հատումէն՝ որով կը տառապի խեղճը, թող դայ վիճակիս մօտէն տեղեկանայ և անգամ մ'ընդ միշտ խզէ իր յարաբերութիւնը, մոռնայ զիս ... : Կը զգամ քու գիրքիդ փափկութիւնը, գիտեմ թէ ի՛նչ գոհար է քեզ ընդունիլ կամ մերժելը առաջարկիս, բայց ան-

գամ մը ձեռքդ կուրծքիս վրայ դիր, այս փափախումը թերեւս կէս ժամէն դադրի, այս պզտիկ տուփիկը որ կուրծքիս տակ կը կենայ՝ իր հետը պիտի տանի այն անուշ գաղտնիքը, որ կեանքիս է՛ն նշանակալից յիշատակը պիտի ըլլայ ... ըսաւ ու ձայնը մարեցաւ, չի կրցաւ շարունակել:

Մարսէյէզը ու երիտասարդը մօտերնիս էին հիմա: Ծար չկար, խիղճս կը տանջէր զիս, վախը պատած էր հոգիս և տղու մը պէս շուարած՝ չէի գիտեր թէ ի՛նչ միջոցաւ կրնայի՝ ամէն բանէ առաջ, ազատիլ պատասխանատուութեան ծանր լուծէն:

Երիտասարդը պահ մը դիտեց, ցնցուեցաւ և իր միջնորդունիին հետ մէկ երկու խօսք փոխանակելէ վերջ՝ կռնակը դարձուց և առաջ արագ սկսաւ եկած ձամբէն դառնալ, մինչ վարժունին ի զուր կը հետապնդէր համոզական խօսքերը անձրեւի պէս տեղացնելով ետեւէն, որոնք օդին մէջ կը կորսուէին առանց օգուտ մը ունենալու:

Հէրմինէ, որ պահ մը թմրած մնացած էր կուրծքիս վրայ՝ սթափեցաւ,

— Համոզուեցա՛ր հոգիս, ըսաւ տկար ձայնով մը ... պիտի ուզես որ երկու խօսք ընեմ իրեն ... մամայիս բան մը չպիտի ըսես, այնպէս չէ՛ ...

— Որո՞ւ, ըսի զարմացած, որո՞ւ հետ ...

— Ժօռթին ... ախ ժօռթին ... ըսելով՝ երբ անոր թեւերուն մէջ նետուիլ ուզեց ու դարձաւ ... ոչ ոք կար դէմը, անոնք շատոնց ձգած էին մեզ, տեսնելով խեղճ աղջկան վիճակը, այն աղջկան՝ որ ասկէ չորս հինգ ամիս առաջ շատ առողջ էր, կեանք և սէր ... բայց հիմա իր այդ վիճակին մէջ զգուանք ազդած էր, իրաւ է:

Հէրմինէ, ո՛չ իսկ բառ մը արտասանեց, թեւիս վրայ համրաքայլ մինչեւ կառքը դընաց, զոր ապագրած էր կանխաւ, և անիւները դարձան այն ատեն՝ երբ ալ իրիկուան զովը սկսած էր և արեւն ալ իր մնաս բարովը դրած:

Վեց ամիս ապրեցաւ միայն այդ խորհրդաւոր իրիկունէն վերջ, ա՛յն իրիկունէն՝ ուր կեղծ Ֆլիւքը՝ ճշմարիտ սէրէն զանազանելու փորձառութիւնը ունեցայ: Օր մ'ալ սեւ գիրք մը եկաւ գուծել մաշը այն անփորձ հրեշտակին՝ որ իրօք սիրոյ գաղտնիքը հետը տարաւ և ինչպէս ըսած էր ինձի:

Ամէն անգամ որ հարուստ տան մը օրիորդներու մօտ օտարունի մը կը տեսնեմ, կը յիշեմ Մարսէյէզը, և ամէն Համբարձման տօնին՝ Հէրմինէի այդ իրիկուան վիճակը:

ՀԱՆԷ՛, ԿԱՎՈՒՄՇՍ, ՀԱՆԷ՛...

ԿԱՎՈՒՄՇԻՆ ՎԻՃԱԿԸ :

Բայց ո՛չ ... ճիւղական վիճակը անցուց, որ շատ գեշ է այս օրերս, այլ Համբար-
ձուսին վիճակը :

Հնամենի սովորութիւն մը բլլալով վիճակ հանելը մեր մէջ այս շաբաթում, Կավուո, որ բոլո՛ւր հնամենի սովորութեանց յարգող մըն է ծայրայեղ, իր կարգին փափաքեցաւ տեղը տանիլ այս աւանդութիւնը :

Ու, ինչ որ իր փոքրերը կ'ընեն իրենց լեզուով, Կավուո ալ կ'ընէ իր ոնովը, իր առանձնայատուկ ոնովը, որուն հիացողները անքիւ անհամար են (հը՛մ հը՛մ) :

Ա՛յսչափ յառաջաբան շատ իսկ է Կավուոսի Վիճակին համար :

— Հանէ՛, Կավուո՛ւս, հանէ՛ ...

Բոլոր բարեկամները ու ծանօթները, ինչ-
պէս նաեւ բոլոր անծանօթները չըջապատած
են բոլորտիքը Կավուոյին, սպասելով բոլո՛ւր
այն անակնկալ ցափառութիւններուն, որոնց ա-
նըսպառ տրցակը պիտի քակէ մեր նշանաւոր
միմուր (հը՛մ հը՛մ) :

Կավուո, ըստ սովորութեան, ճակտին
վրայի մազերուն երկար խուրճը դէպի առաջ
կը քաշէ՝ փայլաչօի մը նման, և կը ձգէ իր
ճաթած ու խռպոտ ձայնը :

Հոռութիւնը վսեմ է, վե՛հ ու սրբաշո՛ւնչ...

— Կը սկսի՛մ կոր, կը պօռայ Կավուո :

Պայմանադրական երեք հարուածները կը
զարնուին. — տա՛նկ, տա՛նկ, տա՛նկ ...

Ու վարագոյրը կը բացուի ... Հանրագի-
տակի ընթերցողներուն առջեւ :

* * *

Մարդ մը բարի, ու բարեպա՛տ, խիղիւրե՛ս,
Պոլսոյ չորս կողմն դուն շարունակ Հոյս բաժնեւ,
Չունի՛ս երբե՛ք փայլած, խօսուած հպարտ, վէս,
Այլ ամենուն դրամ տալու մեծ հավէս,
Հազէ՛ծածի տարց միջեւ միակն ես,
Սիրես պիճքե՛ք, եկեղեցի, մայեօնէ՛զ,
Լրագիրդ տանազար հաս կը հանես :

— Գայտերեան Ծ. Յովհաննէս :

Նոնիներու նման ունի մի հասակ,
Ոսկիներով լեզուն է միշտ իր ֆակ,
Յօդուածներու սրցակ մ'է իր պայուսակ,
Կեանք գրել յօդուած ու վէպ բիր տեսակ,
Կարմիր պէխերն անոր խոռո հիշ տեսա՛ք,
Դէմը ելլողն կը դառնարն ան մի ... սագ :

— Դօնուկեան Միսաք :

Գրաբար լեզուն իրեն ձգուած է աւանդ,
Ունի խոհեր, սկզբունքներ հնաւանդ,
Շարականներ քարգմանելու մեծ եռանդ,
Քաղաքական լուրի համար ալ խօ՛ւ խանդ,
Յօդուածներուն մէջ կ'արձակէ հազար շանք,
Սիրականներն. — Թա՛յմզ, Գէշեա՛ն եւ Լէվա՛նք :

— Տէր-Աղդէսեան Մուրադ :

Ծիծաղն ըրած իրեն անեղ մի վահան,
Դարձած է ա՛լ հայու կանանց ... հոգեհան,
Հայ բառերը իրեն առջեւ կը խաղան,
Կապիկ մ'ունի, ո՛չ արարման, ո՛չ ալ խան,
Սակայն մ'ըսէք անոր երբեք. — Ա՛հ, վա՛հ ան...
Իր հանդէսին մէջ կը հանէ ձեզ հավան :

— Փափագեան Վահան :

Շահած փարան երբեք չըլլայ քո՛ղ հաւամ,
Գրել սկսիլն ընէ արդէն բազմա՛մ ամ,
Գրիչ մ'ունի, սուր ու խայթիչ, անթառամ,
Գրածներէն բոլորէ՛ն ալ կ'առնէ համ,
Իր տղերք են խոցոտող մէջ մէկ զամ,
Պատկեր փնտէ, բլլա՛յ մարդ, կին կամ ... շողգամ :

— Արսենեան Արամ :

Իր մարմինին միտերն երբեք չեն լո՛ւ փ լո՛ւի,
Ձեզկէ չէ ան, քեթեւօյիկ կամ զրգօփ,
Գիրք հանողին սիրք յաւէ կ'ընէ հօ՛ւի,
Երբ խորի քէ պիտի ընէ զիճք ... կոփ,
Մանուկները կը խաղցրնէ հօ՛ւի, հօ՛ւի, հօ՛ւի,
Համած քերք իր՛ չի՛ նետեր երբեք քօի :

— Տէր-Յակոբեան Յակոբ :

Երկու շայր ունի, երկուսն ալ սարա՛ֆ,
Անոնք փարա ծախեն, իսկ ա՛լ լո՛ւկ պօշ լա՛ֆ,
Ջուրի շիշին յոյներն ըսեն ... Թօ զառա՛ֆ,
Գիրք մը հանեց, ուր գովեց իր ... չորս Թարա՛ֆ,
Երբ առնրի տղերէս ... քո՛ղ ընէ ալ՛ֆ :

— Օննիկ Չիճքե-Մարաճ :

Պարոն մըն է, ակնոցաւոր ու շաւ շիք,
Կը սիրէ ան բոլոր կիներն նոցաիկ,
Իր *սէր*ն է լոկ գրպանն ընել յաւէս լիք,
Շաւ Բալէլէն հիմնուցած է քիւր կօշիկ,
Դէմը ելլող աղջկան չըսէր. — «Ա՛հ, խուճի՛կ,
Կուսա՛ս ինձի արդեօք պզտիկ մի պաշիկ»:

— **Վահան Թօօփիկ:**

Չաւակներն են միտ հայրիկին հնազանդ,
Կը գրէ յա՛ր, ըլլա՛յ Ծնունդ կամ Կաղանդ,
Չէ անցուցած իր ձեռքերուն երբէք *կանթ*,
Գրիչ մ'ունի, հոռիք, խիզախ, անկաշկանք,
Չէ խնայած ամենեւին հիգ եռանդ,
Տարածելու *Բիւզանդիոն*ր աստ ու անդ:

— **Բէլէան Բիւզանդ:**

«Գլուխը՛ տղ, բուրբը՛ մոխի՛ր...» — խօսք անհուն,
Ալելուէա՛, Ալելուէա՛, բարձրութիւն,
Իմաստութիւն, խոհունութիւն, սրբութիւն,
Երուսաղէմ, Երուսաղէմ, մեծութիւն,
Ձիթենեաց լեռ ու Դողդոքան, վեհութիւն,
Դերսեմանի ու Նազարէթ, վեհութիւն:

— **Մամբան Յարութիւն:**

Չէ՛ քուած ան կեանքին մէջը ո՛չ մէկ բոյր,
Կը քաղմանէ արտաքին եւ ներքին լուր,
Իր ցուիչը կրա՛կ է, բո՛ց, շա՛նք ու հո՛ւր,
Կօրք փայտ է, իսկ վարի ծայրն ալ՝ արոյր,
Իր քալին ո՛չ է կառող մարել ո՛չ մէկ ջուր,
Չընաւորներն կը զառանցեն միտ ի զո՛ւր:

— **Բէլէան Պարոյր:**

Իմաստութիւն մը ունի զերդ . . . Սողոմոն,
Իր գլուխն է սիկարի թուրք, ո՛չ . . . մալոն,
Իր գրածներն անարատ են զերդ . . . սապօն,
Չերբար նսիլ Մեծ-Կղզիի ճագօտն,
Ո՛չ քիւ Բերա Թօգաթեանն ու Լըպօն,
Բընութիւնը նարինջէ չէ՛, այլ . . . լիմօն:

— **Ալահաճեան Սիմօն:**

Պունճուխ կախէ՛ վրադ, չառնես դուն Նազար,
Ըստանալող աղջիկներ կան քիւր հազար,
Ճաւակեղպիկ ըզկօյանը պիտի հազար,
Բայց, կ'աղաչեմ, այս խօսքերուն . . . մի՛ հազար,
Եղբայր մ'ունի՛ս անունն ըլլայ . . . Եղիազար,
Մի՛ արճեղիր, խաղկ կ'ընես ինձ ի . . . բազար:

— **Հրանճ Նազար:**

Պէտքի պէս կ'ընէ տախտ ու մէմլէն,
Ու կ'ուզէ որ հաւնին իրեն այրք ամէն,
Ձիյնեմ սեռած է ան գրական ո՞ր զարմէն,
Հաւնողներն իր բո՛ղ մի առ մի հո՛ւս հրամանեն,
Ոնր կարծէք փոխ առած է . . . մեր ժամէն,
Ասուած ինձի՛ք տալ գրեկեղեկի իր. — ամէ՛ն:

— **Ենով Երմէն:**

Բարձրահասակ, նոններման ու *սիմօր*,
Ըլլա՛յ Կաղանդ, ըլլա՛յ Ծնունդ կամ Չափիկ,
Գում-գաբուի Սալօնն ընէ միտ *սիմօր*,
Ձի գիտեր ան ընել մարդու *հիշ* մասիկ,
Ո՛չ ալ ընել տար անոր խօսքն մտիկ,
Քալած համբան անշափելի՛ է . . . à pics:

— **Մուպահեանի Ս. Բիկ:**

Ես միտ անոր հարսանալն կը ցանկամ,
Կը պտքի երուսաղէմ, Եաճա, Շամ,
Վանքերու մէջ կ'ուսէ հաշիւ համադամ,
Դիտէ քէ ե՛րբ ծնան Մովսէս ու Ադամ,
Բայց չի՛ գիտեր Մոնարդ, դաւանակ, նօ՛թ ու կամ,
Յօդուածներուն մէջ իր բոլոր կայ շաւ համ:

— **Ալվազեան Ս. Բրահամ:**

Բերքուածները տուղ չեն բընաւ, այլ ածան,
Սիրք՝ գողցիկ, նայուածքն՝ անուշ, ո՛չ դաժան,
Համակիր չէ ո՛չ կասուի, ո՛չ ալ շան,
Ձը կարծէք քէ անի մէկն է անըրեան,
Կանանց փէտն յաւիտեանքս անբաժան,
Կոչուի՛ն Թագուկ, Սուրբիկ . . . Ամէ՛ն էլ կամ ժանն:

— **Պարսաւեան Մերուժան:**

Հնգար անգամ քսի քեզի, կ'իմանա՛ս,
Տաղանդդ մեծ է, չեն նմանիր քեզ ան առ,
Մօզ չես ուտեր, ո՛չ ալ լօլօ, անանաս,
Այլ մեակես երաժշտութեան վե՛հ Պառնաս,
Սրդ, թնշո՛ւ երբ ելլեն տալու քեզի դաս,
Դառնայ յանկարծ *խափալիդ Թաս*,
Կը բարկանա՛ս,
Չարմանա՛ս:

— **Մաքսօ Մանաս:**

Տասը տարին մէկ անգամ լոկ փոխէ լաք,
Հիննալ չգիտեր իր ժաճէրը կամ տափաւ,
Փրանսերէն մը կը բարբառի ան չա՛նք բա՛նք,
Իր քմուկը *սէրի* է եւ կօրք՝ փաւ,
Կը վազէ ան, կը վազվզէ՛ անընդհատ,
Տղա՛ կ'ըսեն միտ. — «Էօրէկը բա՛նք բա՛նք...»:

— **Բէլէանեան Սմբատ:**

Պոյ մը ունի, երկա՛ր, բարա՛կ, շիփիսա՛կ,
Իր գրուածքներ վիրապներ են անյասակ,
Դիտէ բաներ, շա՛ւ մը բաներ ո՛չ յասակ,
Կ'ըսէ խօսքեր, յանա՛խ պաղ, իսկ . . . երբեմն տափ,
Համեստ չէ՛ ան, ինչպէս շուշան, մանիշակ,
Դրչի մասին չունի կարծեմ մեծ հաշակ:

— **Ալպօյանի Արեակ:**

Շաւ փափուկ չէ՛, այլ աւելի *խաւթ*,
Երբ խօսիք հետք, կը նաքի մարդ,
Առ ի մեհաւաւս,
Կը դրկէ իր գառն,
Չէ՛ ան մի վարդ,
Կամ առլօնի զարդ,
Նշանածին անո՛նը՝ Նրա՛ւրդ,
Կը սիրէ դիտել խոս ու յարդ,
Կը դաւանի ինքզինքը . . . գերմարդ:

— **Դօլանեան Սողաւարդ:**

Հասակ՝ հասակո՛ւկ ,
Աւելի անուփ ,
Այսերը փափուկ ,
Եղունգներ ի սուգ ,
Մարմինիկ մի մուկ ,
Բնա՛ւ համեսուկ ,
Թեթեւ զերդ մի փուփ ,
Սիւս մըն ալ պապուկ ,
Կը պոռայ կուկո՛ւկ . . . :

— Թուղանեան Կառնուկ :

Ազնիւ մարդ մըն է ան ,
Ո՛չ խաղցող, ո՛չ խրման ,
Կը սիրէ իր գրպան ,
Ընել միտ, յա՛ր լրման ,
Բայց պակսի մամոնան ,
Ձի այդ մեծա՛ղն անըման
Ձի սիրէր մեզ նման
Մարդիկը . . . գրական :

— Արփիարեան Տիգրան :

Մանկան հոռմեւեն կը գրուցեն մօռօ ,
Պարապ մարդիկն ալ կ'անուանուին զերօ ,
Գործի մարդիկը մի՛տէ կ'ընեն ճիւրօ ,
Լաւ մէզէ կ'ըլլայ խիտ հոսած չիւրօ :

— Հորոյ :

Կը քերթ անգուլ ,
Իր մարմինն է թոյլ ,
Գրիչը ո՛չ ծոյլ ,
Կը կրէ քանթ թոյլ ,
Հացը կուտայ կուլ ,
Կը հազնի ջուլ ,
Կը քերթ բզիւլ ,
Բայց չէ ան մի . . . moule !

— Վահրամ Թաթուլ :

Իմ դերձակիս հոգին է ճան ,
Միտքը բո՛ւք . . . բաթլիման ,
Սուրճը կը խմէ ֆինճան ֆինճան ,
Շինեց հսկայ աբարդման ,
Եւ եղաւ քաղին զիլի հանան ,
Երբ որ տեսնէ զինքը հաշան ,
Չըլլար կապած միտ իր փաշան :

— Մուսանդ Միր...իւնան :

Ձի սիրէր մեծաղն զոր կոչեն փաւա ,
Չուգեր ունեմալ աղախին , ծառայ ,
Տարին անգամ մը երբ կ'ելլէ Բերա ,
Ձի նեւեր երբէք ճիշ կամ նաղարա . —
Ս'հ , նառա՛ , ա'հ , նառա՛ . . . :

— Իմերա՛ :

Եա՛ր, եա՛ր, եա՛ր, եա՛ր, եա՛ր, եա՛ր, եա՛ր, եա՛ր,
Կը պրտքի սիյա՛ր սիյա՛ր ,
Շալկած ուսին պարկ մը խրյար ,
«Հիչ պու հալին սանա ույա՛ր» :

— Յարութիւն Արփիար :

Իր ընթերցողները . . . բոլո՛ւր շուկացի ,
Կը խօսի ի վերայ բամպակի , հացի ,
Սոխի , սիւսորի , ելակի , սանձի ,
Գրածներն աղէկ կարդա՛ եւ անցի . . . :

— Ժիրայր Շիրակացի :

Թը՛գ , քը՛գ , քը՛գ . . . ո՛վ է ան ,
Լեզուն ու գրիչը փէք եաման ,
Անկէ ալ կը պակսի մամոնան ,
Կարծես սրողներ է հետը սասանան ,
Գիտցէ՛ք նայիմ ո՛վ է ան ,
Աման , աման , աման ,
Է՛լ աման :

— Պարսիկակցի Տէր Վահան :

Ո՛մն , ո՛մն , ո՛մն ,
Ճահնիրի ճիհնոն . . . :

— Մարկան Ահարոն :

* * *

Դեռ կալուօշ չա՛տ խօսեցաւ , երգեց ,
Քերթեց . . . Հոմերոսի հետ մրցելով :

Բայց , ստիպուած եմ վերջացնել , որով-
հետեւ ազնիւ Պ. Սարգեան համբերութիւնը
կորսնցուցած է և կը պոռայ որ տեղ չմնա՛ց
ա՛լ ու Լիլան ալ խի՛ստ կարեւոր ըսելիքնե-
րը ունի :

Մնացած մասը՝ զա՛լ տարի , Համբար-
ձումին :

Մանօթութիւն . — Թո՛ղ դիտել չարուի
թէ՛՝ վերի ոտանաւորներուն մէջ կը պակսին
իմաստը , չափը և յանգը . . . :

Սենյալիսդ քերթուածներ էին անոնք :


ԵՐՈՒԱՆԻ ԹՕԼԱՅԵԱՆ

Ալեմսաղի , Մայիս 19

— Ինչպէս է տիկինը , ծով կը մտնայ կոր .

— Շնորհակալ եմ միւսիւ աօքթօր , այո՛
կը մտնայ կոր աւա , տալմիշ Լոլած ատենը
ծովի ջուր կը կլլէ՛ կոր եղեր , ասոր ճար մը
չըլլար աճապ .

— Չէ՛ ախպար չարէ չիկայ , չիւնքիւ կը-
նիկները ծովին տակն ալ իջնան նէ , նորէն
բերանին չգոցուիր :



ՄԵՐ ԲԱՐԵՆԵՆ

ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏԻ ԶԲՕՍԱՆՔ

Ա. Ս. ԻԳ

Սալօններու մէջ, երբ մասնաւոր հաւաքոյթներ տեղի ունենային և դաշնակահար X... հրաւիրուէր՝ տաղանդը փայլեցնելու, ձեռքերուն ճարտարութեամբը և ձայնին հրաշալիութեամբ դիւթելու համար ունկընդիրները, ամէն անգամուն ալ «անցեալ կեանք մը» յիշեցնող valse մը կը նուագէր, ընկերակցութեամբ խիստ մեղաձորի Romanceի մը, որ հետեւեալ տողերով կը վերջանար.

Comme on joue avec une rose
Ne jouez pas avec le cœur !

Իր բարեկամներուն չրթունքներուն ծայրն էր այս romanceը, և գոց գիտէին այն մէկ երկու երես ձերմկնող կտորները, որք X...ի փառապանծ, անթառամ պսակները կը կազմէին:

Շատ մը առիթներով, իրեն դիտել տուած էին, խիստ մտերմօրէն, թէ՛ monotone բան մըն է միշտ մի եւ նոյն բաները մտիկ ընելը, «նոր հեղինակութիւններ ըրէ»: Բայց աս քննադատութիւնները երբեք չէին զինքը խայթեր և նոյն իսկ խթան մը չէին ըլլար նոր հեղինակութիւններու մղելու զինքը:

Արդարեւ անուրանալի էր իր exécutionը... այն հիանալի արուեստը որ հոգի կուտար դաշնակին: Այնքան պատկերոտ երաժշտութեամբ մը օժտած էր, անուշ զգայնութեամբ մը կօտրէր այս romanceը, զոր ունկնդրողները, կապրէին ա՛դ կեանքը բեկրեկուած վարդին: ... Պզտիկ լուսնի մը կը յաջորդէր... Թիւրու ճողփիւնը ջուրերուն մէջ, լուսնին շողերուն չափ սարսափող սիրոյ մրմունջներ կը լսուէին դաշնակէն: Եւ շատ հեշտալո՛ւր, գինովցնող երաժշտութիւնը

«Comme on joue avec une rose

Ne jouez pas avec le cœur» ով

կը վերջանար:

* * *

Բաւական յառաջացած էր ընդունելութեան զեկուցուած ժամը, երբ Տիկին Սէ-

րանեան և իր աղջիկը Լիզա ներս մտան հիւրասրահէն: Լիզա՝ նրբահասակ, խարտեալ մըն էր, որ քիչ մը չփոթած և կարմրած յառաջացաւ սալօնին մէջտեղէն, երբ հետաքրքիրներ զինքը ոտքէն գլուխը կը քնամէին:

Հարցախաղի պահուն սրամիտ պատասխաններ չէին որ կը պակսէին. սակայն ցաւաւոր թ պարագայ մը միայն կուգար թերի, շատ անկենցաղագէտ հանգամանք մըն տալ մտքի այդ զբօսանքին: Գրեթէ հարցումներուն մեծամասնութիւնը, շուրջը կը դառնար օրիորդի մը, որ սակայն բացակայ էր ցայժահանդէսէն: Ամէնքն ալ, կարծես համաձայնութեամբ, վատութիւնը ունեցած էին, այդ օրիորդին բացակայութենէն օգտուելով, անոր կարգ մը թերութիւնները, իրենց սըրամտութիւններուն նիւթ ընել:

Հարցախաղը հազիւ լմնցած էր, և ահա ամէն կողմէ valseը, valseը կը պօսան:

X... կրիայի մը լրջութեամբ դաշնակին զնաց և նուագեց:

Մեղամաղձոտութիւնը ընդհանուր էր: Ամէնուն երակներուն մէջ սարսուռի չրջան մը պտուտկեցաւ, և ամէն կողմէ.

— Հիանալի, հրաշալի, տաղանդ:

— Ինչ հիանալի կը նուագէ կոր, կերպէ կոր, ըսածը կզգայ կոր, ահա՛ էութիւն մը որ համակ զգացում է, որ կրնայ սիրել գիտնալ ...

— Երեւակայեցէք, Տիկին, իր ձայնովը չէ որ կերպէ, հապա իր բոլոր հոգիովը, սըրտովը:

Լիզա, երիտասարդուհիներու խումբի մը մէջ խառնուած՝ ուշի ուշով կը հետեւէր: Առաջին անգամ էր, որ զինքը մտիկ կընէր: Դաշնակին մեղանուշութիւնը, թրթռացումները և X...ի կեղծ հառաչները, զինքը տակն ու վրայ ըրին, յուզեցին և մէկ երկու անգամ շատ բացայայտօրէն ինքզինքը մատնեց: X..., որ սատանութեան մետալը ունէր, հոտ առաւ, կռահեց թէ իրեն համար յաղթանակ մը կսպասէ, ուստի Լիզաի մօտեցաւ և ըսաւ.

— Օրիորդ, քիչ առաջ տեսայ որ խոճրապէս կը հետեւէիք musiqueիս, թաղուն տաղանդ մը կերեւիք, դաշնակ կը նուագէ՞ք:

— Շատ աննշան.

— Եթէ Տիկ. մայրերնիդ հաւանի ... սիրայօժար յանձն պիտի առնէի ...

Եւ այն իրիկուն իսկ որոշուեցաւ որ շաբաթը երկու անգամ դասի գայ X... :

Առաջները ամէն բան կանոնաւոր կընթանար: Տիկին մայրը իւրաքանչիւր դասի ներկայ կը գտնուէր. ապահով էր թէ երկու կողմէն ալ իրենց անձնական զբաղումներուն տրուած էին, անանկ որ ինքզինքին կը ներէր պզտիկ բացակայութիւններ սենեակէն դուրս, ա՛յն ալ, նամակ գրելու, հրաման մը տալու եւայլն, աս կարգի բաներու համար:

Այս կարճ tôte-à-tôteները իր աշակերտին հետ հեշտիւ երեւան հանեցին և X... կատարելապէս համոզուեցաւ թէ Լիզա՝ երաժշտութենէն, դաշնակէն աւելի իրեն բռնուած, սէր տուած է: Եթէ X... պարկեշտ խառնուածքի տէր, ազնիւ երիտասարդ մը եղած ըլլար, աղջկան մէջ ատանկ տկարութիւն մը տեսնելուն պարտաւոր էր քաշուիլ, դադրեցնել իր դասերը և ո՛չ թէ քաջալերել զինքը, տառապեցնել անոր զգայուն հոգին: Բայց որքան հեռու ասանկ սրտի՛ աղանութիւն մը: X..., ընդհակառակը, Լիզայի ազ տկարութեան մէ՛ջ գտաւ իր յաղթանակը, իր արժանապատուութիւնը անով կը շողոքորթուէր: Կատարեալ դերասանութիւն կընէր աղջկան քով, կը հառաչէր, կը լռէր, աչքերուն սեւերը կը կորսնցնէր, նուազում, յուզում կը կեղծէր: Հրաժեշտի պահուն ձեռքը կը սեղմէր և շատ գաղտագողի հէգ աղջկան աչքերուն խոնաւութիւնը կը քամէր. սաթայէ՛լօրէն:

Ապո՛ւշ կըլլայ միթէ՛ այն աղջիկը՝ երբ տեսնելով, կրելով աս ամէն ցոյցերը, քաջալերութիւնները, սիրտ կուտայ, կուզէ հաւատալ թէ իր անհուն, զօրաւոր սէրը անկեղծօրէն բաժնուած է:

Օր մը դարձեալ Տիկ. մայրը կարճ բացակայութիւն մը ունեցաւ: X... ծռելով դէպի Լիզան, յանդգնեցաւ համբոյր մը տալ անոր վզին: Լիզա դողաց, դեպի դեղին կրտսեցաւ, խորո՛ւնկ նայուածք մը ուղղեց, ուրուն՝ X... ժպիտով մը պատասխանեց:

*** Ինչպէս ըսի, X..., աս յաղթանակը իր փառքը կը սեպէր յիմարօրէն, և դէմը ելլողին կը պատմէր իր մեծ քաջագործութիւնը:

Բարեկամներէն մէկը անկեղծութիւնը ունեցաւ դիտել տալու իրեն, ըսելով.

— Ըրածդ ո՛չ միայն յիմարութիւն է, այլ կատարեալ տմարդութիւն է, սրիկայութիւն է:

— Ը՛... ասոնք սիրոյ աշխարհին փառապալներն են, որոնք ուղղակի կապուած են տաղանդիս հետ:

— Քեզի համար փառապալ! , սակայն օրիորդին համար:

— Միթէ ի՛մա է յանցանքը եթէ անիկա տկարութիւնը ունեցեր է սիրահարուելու ինծի:

— Բայց գիտե՛ս թէ դարձեալ ապուշութիւններուդ տրցակը բացած ես, աս խնձորը երկինքէն չինկա՛ւ ա՛. եթէ դուն զինքը չի քաջալերէիր, ապահովաբար գործը ա՛սքան չէր յառաջանար, և դո՛ւն որ այնքան յառաջ գացեր ես ...: Քու պարտականութիւնդ, իբր պարկեշտ մարդու գործ, էր չի քաջալերել զինքը և հեռանալ:

— Այս իրիկուն շատ հոգեբան, և խրատաբարոյ իմաստասէր մը դարձեր ես:

Եւ բաժնուեցան առանց իրարու ձեռք սեղմելու:

*** Երբ X... առանձնացաւ զգաց թէ եղած դիտողութիւնները զինքը վիրաւորած էին, բայց շուտով մը ինքզինքը մխիթարեց, ըսելով.

— Կարելի՛ բան է որ մարդ այնքան ըստորնանայ, մարմնական հաճոյքներու ետեւէ ըլլայ, սրտով կապուի, ի՛նչ banal բան: Եւ միթէ ասոնք ամէնքը ի վնաս, արուեստիս, տաղանդիս չեն: Արուեստագէտին միակ պաշտումը, սէրը պէտք է ըլլայ, իր արուեստը: Արուեստագէտ մը ազատ է և պարտաւոր է սիրոյ պարտէզին մէջ թափառելիլ ուզած ծաղիկը քաղելու համար, պայմանաւ որ երկարատեմ հոն չմնալով դուրս ելլէ: Ամուսնանա՛լ. ո՛հ, Մուսանբա թող զիս փրկեն ատանկ դժբաղդութենէ մը: Ամուսնանալ, գերեզման դնել է արուեստը, հո՛ն՝ կը մնանի: Լիզա պէտք է գիտնայ, գուշակէ աս բաները: Իրաւ է թէ իրեն նկատմամբ համակրութիւն ցոյց տուած եմ, սակայն ասիկա իմ ուսուցչի, արուեստագէտի հանգամանքօ կը պահանջէր, այս համակրութիւնը չկրնար ո եւ է բանի փոխուիլ՝ ո՛չ ներկային և ո՛չ ալ ապագային մէջ:

Համբուրի դէպքէն ամիս մը վերջ Տիկին Սէրանեան հետեւեալ երկտողը կընդունէր.

«Ստիպուած կը հեռանամ, Bucarestէն ընդունած Concertի մասնակցելու հրաւերիս վրայ».

Այդ օր, Լիզա, զգայուն, վիպական աղջիկը տակն ու վրայ եղաւ, յուզումը զինքը կը խեղդէր: Անկէ վերջ նուաղումներ յաճախողէպ եղան:

Մայրը — որ անտեղեակ էր իրաց — յանձն առաւ, աւելի վարպետ virtuoseի մը խնամքներուն զինքը յանձնել, բայց ամէն բան ապարդիւն մնաց, մայրը չէր կրնար ո՛չ մէկ կերպով եղածին խելք հասցնել:

Ի՞նչ ատենէն յիմարութեան վայրկեաններ եկան պաշարել խեղճը: Եւ երեք ամսուան մէջ այս գեղանի աղջիկը հալեցաւ մաշեցաւ:

Երբ Լիզան ասդին անիրականացած եքազներուն հետ հող կը դրուէր, Bucarestի մէջ, մեծ արուեստագէտը — վա՛տը — իր romanceը կերդէր.

Comme on joue avec une rose

No jouez pas avec le cœur!

ԱՐՇԱՆ Թ. ՄԱՐԿԵԱՆ

ԿԸ ԿԱՐԴԱՔ...

Խմբագրութեան մասնաւոր հրաւերին վրայ Ազն. Տիկին Ա. Թեոդիկ քեւեղ կամ մեզ աս սիրուն յոգնած մը, սակայն ուշ հասած ըլլալուն՝ սխալուած եմ մեր յաջորդ քիւով հրատարակել, ինչպէս նաեւ՝

Թ. ԱՆՎԻՍԱՐ

Ե. ԹՕԼԱՅԵԱՆ

Ս. ԲԱՐԷԼԵԱՆ

ՆԵՐՇԱՊՈՒՆ

ՌՈՄԱՆՈՍ

ԱՆՄԵՌՈՒԼԻ

Է. Լ.

Կարծեմ քե կսպասե՛ք

Լ Ի Լ Ա

ՆՇԱՆԱԻՈՐ ԱՆՁԻՆՔ

« ՅՐՈՒԻՉԸ »

Ինչ կուզեն թող ըսեն, փնտռուած մարդեր են սա ցրուիչները: Երբեմն ալ սակայն անո՛նք են որ զքեզ կը փնտռեն... առկախ հաշիւնին խնդրելու համար:

Գործերնին աւրուող մարդիկ, կամ տէրտէր կըլլան կամ ցրուիչ: Մէկ քանիներ բացառութիւն են միայն:

Ցրուիչը՝ իր անութիւն տակ սեւ պարուծայ մը առած մինչեւ իրիկուն օրուան թերթերուն մունետիկը կը դառնայ:

Ցրուիչները հիմակուան դպիրներուն պէս ամէնքը մէյմէկ եղանակով կը պօռան, եւ այդ տարբեր եղանակները միաձայն են. կը յուսացուի սակայն որ օրին մէկը անոնք կամուրջին գլուխը ձեռք ձեռքի տուած եռաձայն «Արեւելք, Բիւզանդիոն, Մանդուկէ» եղանակեն:

Ցրուիչները կիներու կը նմանին. եթէ տեւականապէս ցրուիչ մը ունենաս, ա՛ն ա՛մէն օր քու պէտքդ կը հոգայ, ու դուն ուրիշ ցրուիչի երեսն իսկ նախելու պէտք չես ունենար... բացի բացառիկ պարագաներէ:

Ցրուիչները շատ մը արհեստակիցներ ունին որոնք բնոյթով շատ կը տարբերին իրարմէ: Կղերականը Աւետարանի վարդապետութեանց classique ցրուիչներն են:

Նպարավաճառի աշակերտները՝ սիրահարական նամակներու ցրուիչներն են:

Աղջիկները՝ Համբուրի ցրուիչներն են:

Ամպերը՝ անձրեւի ու ձիւնը ցրուիչներն են:

Ուրականը՝ փոշիներու եւ աշնան տերեւներու ցրուիչն է:

Կիները՝ իրենց այրերու քսակին ցրուիչներն են:

Սաչ գրանք մազերու ցրուիչն է:

Դաստիարակները՝ ծեծի ցրուիչներն են:

Երաժշտութիւնը՝ ագեղ մտածումներու ցրուիչն է:

Լաւատեսութիւնը՝ յուստեսութեան բարերար ցրուիչն է, պայմանաւ որ երկրորդը տկար ըլլայ առաջինէն:

Մօրձիկը՝ անտանելի ցաւերու ցրուիչն է:

Արձակուրդը՝ վարժարանի աշակերտներու, րու ցրուիչն է:

Հողագործը՝ հունտերու ցրուիչն է:

Լոյսը խաւարին ցրուիչն է:

Թոքախտաւորը՝ մահացու միջբօւններու ցրուիչն է:

Խենդ հովը՝ կուսական մազերու եւ քըղանցքներու փնտռուած ցրուիչն է:

Թեզկեանաւը՝ իր բաթրօնին ապրանքներուն ցրուիչն է:

Գրաչարը՝ արդէն չարուած գիրերուն ցրուիչն է:

Խմբագիրները՝ պարապ եւ լեցուն խօսքերու ցրուիչներն են:

Դասատուն՝ իր սաներուն կարողութեանց նօթերու ցրուիչն է, նօթեր որոնց մէջ չատերը գէրօ կ'ըլլան:

Արէտ Շաբաթական Ըօթերու ցրուիչն է, նօթեր որոնց մէջ եթէ ոչ անկախ գէրօի, գէթ խել մը կախման կէտերու կը հանդիպիս:

Եղիշէ Եպօ. Դուրեան՝ Ս. Գրոց չափաբերուած դրուագներու անստգիւտ ցրուիչն է:

Զօրապ՝ ցունց իրավէպերու շնորհալի ցրուիչն է:

Սիպիլ՝ գոհար քերթուածներու եւ կանացի փափուկ զգայնութիւններու ցրուիչն է:

Հ. Ասատուր՝ կենցաղագիտութեան և արդի ախարհաբարի նրբադատ կանոններու միակ ցրուիչն է:

Յ. Գ. Մրմրեան՝ որուն «գլուխը ողջ է եւ թուղթը մոխիր», իր այդ մոխիրներուն ցրուիչն է:

Քէչեան Բիւզանդ՝ «ինչ կ'անցնի կը դառնայ»ներու պատի պատ ցրուիչն է:

Թէոդիկ՝ հեգնական ժպիտներու ցրուիչն է:

Ար. Յարութիւնեան՝ դեռ վաղուան գըրականութեան ապարդիւն ցրուիչը կը մնայ:

Զիֆթէ-Սարաֆ, քաղցրահամ «մտքի կաթիլներ»ու եւ cynique պատկերներու ցրուիչն է:

Երուանդ Տէր-Անդրէասեան Մաքս Նորատուի, Նիշէի, եւ Մունէ Սիւլիւի մասին յայտնուած գաղափարներու հաւատարիմ և խղճամիտ ցրուիչն է:

Տքթ. Թօփեան՝ իմաստասիրական ու քննական հետազօտութեանց անվերապահ ցրուիչն է:

Քասիմ՝ «որուն մտածումներ»ու ցրուիչն է:

Արամ Անտոնեան «աջ ու ձախ»երու վաղեմի ցրուիչն է:

Ալփասլան՝ ոսկի յանգերու ճրի ցրուիչն է:

Յակոբ Տէր Յակոբեան՝ գրական ապտակներու թեք ցրուիչն է հինգչաթիէ հինգչաթի:

Ենովք Արմէն՝ ոմանց համար անհանդուրժելի, իսկ ինծի համար յանդուգն գաղափարներու ցրուիչն է:

Գ. Զարուհի «կանանց բաժնին» ցրուիչն է... Բիւզանդիոնում:

Տօմինօ՝ չեմ գիտեր ինչի ցրուիչն եղաւ իր կարգ մը գրական բարեկամներուն:

Եղուարդ Գօլանճեան՝ ներյատուկ եւ վեհօրէն ողջամիտ կիսամաղձային ներքգացմանց արտայայտութիւններու, եւ Բընարի նոր միւռնոյ «թռչած թերթ»ու թոյլ ու թախծոտ թրթրացումներու ցրուիչն է:

Միսաք Մեծարենց՝ եթերային երաղներու ցրուիչն է:

Մ. Պարսամեան՝ բոյսի եւ կոյսի ցրուիչն է:

Ա. Այվաղեան՝ Սաղիմական յուշքերու երբեմնի ցրուիչն է:

Ս. Թիւթիւնճեան՝ թատրոնի վաստակաւորներու կեանքին ու գործունէութեան ցրուիչը, եւ փոխարէն իզմիրլիանով... գանձիչն է:

Սիմօն Չէօմլէքճեան՝ առեւտրական տեղեկութեանց եւ բուրդի, բամպակի ու հաւկիթի գիններու ցրուիչն է:

Թօլայ. ուզողը թող լայ, ինքը սակայն ծիծաղի ցրուիչն է:

Լիլա՝ ան ալ բնաւ չպիտի լայ, զի ինք ալ ժպիտի ցրուիչն է:

Իսկ ես ցրուիչն եմ կէս-կատակ՝ կէս-իբաւ այս խօսքերուն:

ՍԱՐԴԻՍ Ս. ՍԱՔԱՆԱՆ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Ասաբազար. — Ստացանք 160 ղրուշը. շնորհակալութիւն:

Իզմիս. — Ստացանք 81 ղրշ. շնորհակալ:

Պանսումա. — Կապասենք:

Քեմիրը. — Ստացանք 54 ղրուշը:

ՀԱՆԷ ԱՂՋԻԿՍ ՀԱՆԷ...

[A PROPOS ՅՕԴՈՒԱԾ]

Մանգուսե մեր առաւօտեան տիպար թերթին շարաթ աւուր հտպիտը թօլա՝ օրուան գրչի մարդոց վրայօք ըրած կարգ մը coups de dentsներուն մէջ, ինձ մեղաւորիս ալ սապէս գրած էր.

Վահան Փափագեան. — Հանէ աղջիկըս հանէ...

Ձեռ գիտեր թէ սրամիտ գրչաղբարիկս ո՛ւր լսած էր այդպիսի առաջարկ մը ընելու ո՛ր եւ է օրիորդի մը. . .

Իրաւ թէ Համբարձման տօնը՝ որուն Վիճակ ալ կըսեն մեր հինօրէնք տիկիները, անոնց համար կըսեմ, որոնք տըրսէվէի կը հաւատան, իրիկունները վերջալոյսէն ետքը փողոց բան չեն թափեր, ու երբ ժամ երթալու համար որոշում տան, տանը դուռնէն կոկսին խաչ հանել, ահա այդ կարգի տիկիներ անպատճառ Վիճակը կը կազմակերպեն դուռ դրացի ժողվելով, ինչպէս նաեւ օրիորդներ եւ անոնց անբաժան միւսիկներ:

Ես՝ իբր զաւելտագիր, շատ անգամներ պատեհութիւնը ունեցած եմ ներկայ գտնուելու այդ կանացի լոճնաին, բայց երբեք եւ երբեք մաքնակցած չեմ ըսելու՝ հանէ աղջիկս հանէ:

Եւ այսօր Տօն Համբարձման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հաճոյք մը պատճառելու համար իմ զուարթասէր ընթերցողներուս, բուն իսկ Վիճակին լոճնան նիւթ կառնեմ և կը նկարագրեմ էջերուս ներածին չափ ընտանի խօսակցութիւնները զորս կանցնին այդ պտուկին շուրջ:

Երեւակայեցէք ծառախիտ պարտէզ մը, օդառուն եւ հովանաւոր, գետինը բնական կանաչ գորգով մը ծածկուած՝ որուն վրայի զարդերը կը կաղմեն՝ հաւերու, սագերու ծիրտերը, նետուած ոսկորներ, կեռասի կուտեր, փտտած սալօրներ, ներ ներ ներ, վերջապէս այն ամէն բաները որոնք քսանըջորս ժամը անգամ մը, երկամիւ կառքը բաղմնելու պատիւը կրնենան:

Կէս գիշերուընէ արթուն ճատըներ, կէս քուն կէս արթուն տիկիներ, այս Մարտին ալ տունը մնացած օրիորդներ, չորս անգամ աղջիկտես ելլող եւ նորէն անյաջող մտտմազէլներ, հայրիկին դրամովը ճախածի միւսիկներ, շարաթականճի պարոններ եւ կըսմիթներէն մարմինին մոս մոռ անառակ լակոտներ, բոլորը եկած խմբուած են գետինը շուրջանակի եւ որոնց մէջտեղը վարդի գոյն զգոյն ծաղիկներով ծածկուած աւանդական պտուկը կը կենայ եւ որուն մէջ առջի իրիկուընէ կաժեր ձգուած են:

Տարեցներու լըջութիւնը քրքշալիւ է է պէտք է ըսել, սիրելւոյ մը մահուանէն ետք անտուկին բացուելուն սպասողի մը սէռիէօ գիրքով, մինչ աւելի երիտասարդները ճուռճինայի մը հանդիսատես ըլլալուն գոհունակութեամբ, և բուն խայնար ջուր երկսեռ ճահիլներն ալ, աչք աչքի ֆլիռթելով, կսպասեն որպէս զի աւանդական կիւլիճը իր դերը խաղայ:

— Հայտէ նայինք Սինէմ տուտու հայր մերը ըսէ, մէջերնիս է՛ն տարօքը դուռն ես...

— Մեղա՛յ, Թորոտեայ տուտուն ալ կայ, անոր մարը կաթէն կտրելէն ետքը, մինչօք քի խօթութիւններուն տիպը սապօն դերը է նէ շարաթ մը տահա ինծի ալ տուէր է...

— Էյ ճանըմ, հիմա տարիք պահելու չենք ելեր, դուռն ես եղեր ես եմ եղէր, նա կը պաշլայեմ կոր:

Հար մեր որ էրկինքն ես, Սուր թող լի՛ն անուն քոյ, էկէսճէ արքայութիւն քոյ, էղիծին կամ քոյ, որպէս էրկինս էվ էրկի, սաց մեր անապաղոր...

Այսպէս շարունակուելով՝ կաւարտի և բոլորը մէկ ականջ կը կտրին:

— Հայտէ նայինք պէյիթ մը, կըսէ Տուտուն, մինչ ըստ սովորութեան դեռատի օրիորդ մը հարսի պէս քողքուած նստած է պտուկին մօտ, թեւերը սոթթած՝ օրուան պլուզներուն պէս:

— Նա ես ըսեմ տէ դուք սըրավարտի կըսէք:

Էնկիցաւում Էնկիցաւում
Էնկիցաւում Էնկի վար
Պէն Եարիմի սեվերիմ
Եանաղրնսա պէնկի վար:

— Աղջիկս աղուոր մը խառնըշտրկէ տէ անանկ հանէ ... (Թօլաեանը այս ձեւը չէր գիտեր կարծեմ):

Օրիորդը ձեռքը ջուրը կը խօթէ և թիւ պուրթօն մը կելլայ:

— Բա որինն է ..., վախճամ Անժէլինն է, էյ իրաւ քի Եանախնեբուն վրայ բիւսկիւրմէ պէնկէր ունենար նէ, Եանի ու Եարը չպիտի ըլլար:

— Ը՛ն: ... Կէլէ չորս տարի իրարու վըրայ սաթլըճան չի քաշէր տէ կը տեսնայիք աղջիկս, ամա կէնէ ... Իշտէ օռթան է ... կըսէ մայրը:

— Խերը տեսնաս Կիւլիւկ հանըմ, իշալա՛ն ճուրի պէս ծառքէ կը հանես ...

— Բա ա՛տ ինչ պիլիմ տուվա էր ...

— Սանքի կը կարգես խօլայուլթինով ըսել ուզեցի ...

— Էյ հայաէ նայինք, պէյիթ մը Սուրբ ունի տուտու, տալաբ ըրէ:

Ճիյէր բարեմ Եանըզ սրբ
Եիւրեյիմ պուլանըզ սրբ
Գապուլ Էքմեմ սեմի պէն
Սեվկիւլիւմ ուեանըզ սրբ:

— Բա՞ ... աչկ օլսուն, էյ աս բէք խը Եանի պէյիթ էր, աֆէրիմ Սրբուհի տուտու, կայնէ դուն, դուն ալ հա՞ ... հանէ նայիմ աղջիկս ...

— Սօխախի դուռի բալլինք մը ... որինն է ...

— Բերուզիկինը պիտի ըլլայ, բէք առջին կը նայի կոր, աչկ օլսուն տիկին Բերուզիկ, սէվկիւլիւն ույանըզ տըր հէ՞ ...

— Ը՛ն: ... վրաս բարի, ես մէկ էրիկս չեմ կրնար կոր չահէր, մէյ մըն ալ սէվկիւլիւ մը պոյիս թախմիշ ընեմ քի հալըս գտնամ...

— Եաղմա չիգա՞յ ... Կէրիք է քի կէօնիւլ ֆառըմամըլ ...

— Նէ իսէ, պէյիթը ո՞վ պիտի զուրցէ, Ագապի դուն ըսէ նայիմ ...

— Հիշ միտքս չի գար կոր ամա, կեցէք նայիմ:

Մաննա դրի օնախը
Անցայ նսայ պուճախը
Սասկեր սէ ազաթի
Քեօն կեսուր օլանախը:

— Է՛յ բէք տէրալի պէյիթ, ուրկէ՞ ալ միտքդ ինկաւ, պէրէքեաթ վէրսին չունիս, չէնէ ...

— Հանէ նայինք աղջիկս ...

— Պօեամայի կլոխու թօփու մը ... որինն է ...

— Բա վո՛ւյ ... աղէկ քի հոս չէ՞ ... Մարեամիկինն է, կէնճը սէպէպ ունէր տէ չի կրցաւ գտնուելու, չէնէ ալ վալա պիտի ըլլար ...

— Էյ ճանըմ աս պէյիթ է, ինչ գիտնամ, Մարեամիկը կէսուրոջը հետ տուտ է տէյի խապար ունիմ, հէմ ալ մախսուս անոր թօփուն հանէ չըսի՞ եա ...

— Ինծի նայեցէք աղջիկներ, պէյիթները քիչ մը տիխաթլը ըսէք, հերուին պէս խըռ չելլայ ... կըսէ խնջոյքը կաղմակերպողը:

— Նէ իսէ, ըսէք նայիմ, սըրան օրիորդ Զիլոռիկինն է ...

— Ես չեմ գիտեր, ի՞նչ ըսեմ ... կեցէք նայիմ միտքս բան մը կուգա՞յ ...

Զմեռ կըլլայ կը ձիւնէ
Սիւսս սերով լեցուն է
Իմ մահուանս պատճառը
Նիյեթիս հարսնցուն է:

— Ատ ի՞նչ տէրալի տէրալի կը զուրցէք կոր, աս բիւթիւն պոչի ցաւերը մէկ օրի՞ եկան, չօգ չէյ ... հանէ նայիմ աղջիկս:

— Բալլինք կախելիք մը ... որինն էր ...

— Ես աս չեմ սեպեր, չեղաւ չեղաւ, կըսէ նշանած օրիորդ մը տեղէն ցատկելով, մախսուս ըսաւ քի, խօրաթան վրաս գայ տէյի ...

— Բա աղջիկս, ի՞նչ գիտնայ ինչ պիտի ելլայ տէյի նէ ... կըսէ ուրիշ կին մը:

— Զաթը Զիլոռիկը հետս թուուլի մըն է:

վախիթ մըն է իս խովալամիշ կընէ կոր ...
նշանուեր եմ տէյի ...

— Էյ ... ասոր վիճակ կըսեն աղջիկս,
իրար ուտելու տեղը չի գայ ... կը ձայնէ կին
մը, որ նստած տեղը նեմ ըլլալուն՝ օձի պէս
ուրր ուրր կուգար:

— Ամա չէ ... աս կէօզ կէօրէ խըսխան-
ձութին է իշտէ ... նէ իսէ ...

— Հայտէ նայինք սըրան որինն է, կը-
սեն ամէնը մէկ բերան ու խնդիրը կը մարի:

— Հոռոքսիմա, դուն ալ բան մը ըսէ,
ամա ընէգիլ պէյիթ չըլլայ, գիտե՞ս ես ...
դուն քիչ մը բէթափսըզ ես ...

— Իշտէ պու, գիտցածս պիտի ըսեմ ...
ամա՞, ետքէն իրարու աչք չի հանէք ...

Թօհում վիհիլմ վար սիֆ
Կիյիլիլմ աբլազ վարսիֆ
Պըլըղընա գուսայլմ
Իսքէր վեր սիֆ Իսքէր վար սիֆ:

— Ձեզի չըսի՞ քի պատուած է տէյի...
տեսաք հիմա պոնած պահքը ... քա չե՞ս
խպնիր քա՞ ...

— Ես ձեզի իլքիպտայէն ըսի՞ քիմ օլօռ-
թա կը գուրցեմ տէյի, հանէ նայիմ աղջիկս,
որին կըրն պիտի ասնի ըսած պէյիթս ...

— Օսկօռ հալխա մը ելաւ ... որինն է
նէ ծան հանէ ...

—

— Էյ աս ասանկ պահել չըլլա՞ր, շախա
մըն է եղաւ ... հայտէ տէրը օռթան թող
ելլայ ... կը պօռան մէկ ձայն:

— Իմինս է ինչ կայ ... ատ պէյիթը ը-
տողը էրկանս պըլըխներուն հարֆ կը նետէ
կոր ամա՞, ը՞... ը՞... եաղմա եօզ բսխելը
կայ նէ թաս տէյի խուլանմիշ չըլլար անի-
կայ ... պորտիդ սըխտոր կապէ քի սանճիդ
կտրէ ... կըսէ Պայծառ, որ ըռէյիզ մակ-
գիրով կը ճանչցուէր թաղին մէջ:

— Բէ՞ք տպաւ ... հա՞ ... չորնամ,
վախ եմ ըսէր ... խերը տեսնաս աչկ չու-
նիմ ... օր մը պաց դուռին առջեւէն ան-
ցայ տէ շէհրիյէ չորպասի կը խմէր կոր, պը-
ջըխնիվար սիւլիւկ սիւլիւկ կախուիլը տեսայ
նէ չորս օր պերանս փշրանք չի գրի ...

— Հայտէ նայինք խըռ մի հանէք, պէ-
յիթ պէյիթ ո՞վ պիտի ըսէ, սըրան որինն է:

— Ինձի նայեցէք միւսկներ, դուք ալ

օլտուխճա գրող կարդացող էք, բան մըն ալ
դուք ըսէք նայինք ...

— Մենք ժողովրդական քառեակ չենք
կրնար ըսել, ինչ որ ըսենք հօք բօհզի պիտի
ըլլայ ... կըսէ միւսիւ մը պիսերուն ծայ-
րերը վեր առնելով:

— Կարպիս դուն կրնաս չինել, ըսէ ...

— Լաւ, ուրեմն ըսեմ:

Օրուան յաջորդ սեւ գիշեր
Հովն ամպերը կը փեռ
Բնաւ պանիւր չեմ սիրեր
Բացի քազէ լօք խաւեր:

— Խախկ եղար ծօ՞, պէյիթ է՞ր սանքի
ըսածդ ... կըսէ ուրիշ միւսիւ մը ...

— Տղաս, չի հասկցանք, բան մը ըսի՞ր
ամա հիշ զիհնս չառաւ կըսէ տուտուն...

— Կեցէք ես ըսեմ մայրիկս, ըսելով ու-
րիշ մը առաջ կը նետուի:

Չասր մը ունիմ կանանչ է
Մեջը սօք սօլու մանչ է
Ըռախիւն աղւոր բան չէ
Գիւնիւն խմէ խաղ կանչէ:

— Եա՛ր, եա՛ր, եա՛ր, հօրւա եա՛ր ...
ծօ խաղ կանչէ չըսի՞նք, մեղք քի տիպեր-
նիդ մանթար կապեր է տպրատունը նստելէն,
ատանկ պէյիթ կըլլայ ... դուն ալ ճըլխ
ելար, կըսէ Հոռօք տուտուն, որ գործին
տէրն էր ու կը հասկնար:

— Բէք աղէկ, միւսիւ Արամը թող ըսէ,
անիկայ օլտուխճա հաթիմ պիթիմ է:

Միւսիւ Արամ ըսուած արարածը, պահ
մը կը կենայ, ձեռքերը մազերուն մէջ կը
տանի, քիչ մը կը պտըտի, վեր կը նայի, վար
կը նայի, կը թոթուի, կը հազայ, կը խնջէ, կը
խխնջէ (.):

— Քա ինչ կըլլայ կոր ... չելանք սէ-
պէպ ըլլանք, կըսէ տիկին մը ...

— Չէ ճանըմ, ուճ տէրէճէ կարդացող-
ները, պան մը ըսելու եախօտ գըրու ըլլա՞ն
նէ ասանկ ըսրազմօղի պէս բաներ մը կըլլան...

— Էյ մեղք է ճանըմ, վազ եկէք, թող
չըսէ չէնէ ...

— Ո՛չ, պէտք է որ ես ալ քերթեմ ...
կը պոռայ Արամ ...

— Քեռթեմ ամա, առաջ դուն կը քեռ-
թուիս կոր եալրուս, հիմա վազ եկուր, կըսէ
տուտուններէն մին:

— Այո՛, եկաւ, հիմա եկաւ, ու զիս
ձերնչեց ...

— Ամա ըսին քի տարիներով սընըր հիւ-
լէթի քաշած է տէյի, վախ ես վրում, նայէ
ինք պիւէ եկաւ կըսէ կոր ... կէնէ պոնեց
անանկ է նէ ...

Ու մէջտեղը կենալով գլուխը խորխոր
ձիւրու պէս վեր՝ կսկսի.

Երբ փարած սրտիդ սեղմեի ամուր
Միեւն կերգեի լոկ սէր mon amour
Հիմա ո՛ւր դիմ քեզի քսէ ո՛ւր
Սիրս պատեր է համակ բոց ու հուր:

— Պան մը հասկցայ նէ ալվալա ըլլամ...
քա մարիկ էօմրիւս մէջը ասանկ պէյիթ լը-
սած չունէի, կըսէ տիկին Սրբուհի, պիշ պիշ
միւսիւն նայելով ... աղջկանս կրնամ առ-
նելի յոյսով:

— Հանէ նայինք աղջիկս այս եալտըզը
պէյիթին ի՞նչ պիտի ելլայ ...

— Առէ՛քի ֆուռքէթա մը ...

Հոն նստող օրիորդ մը կաս կարմիր կը-
լայ, ու բոլորը մէկ անոր կը նային:

— Էյ աս սրմառւամա եղաւ, զաթը վա-
խիթ մըն է գիհնիս մէջը պիւքմիւշ կընեմ
կոր քի, աճապա ...

— Հայտէ նայինք հիմա սըրան չէ, ա-
սանկ բաներ ույմիշ կըլլայ պազի, մենք մեր
մասուհաթը նայինք կըսէ մայրը, որ աղջը-
կանը վրայ գեղեցիկ բան մը զուրցուած ըլ-
լալուն համար նստած տեղը նեղ կուգար:

— Նէ իսէ ճանըմ, պէյիթ պէյիթ, ո՛վ
պիտի ըսէ, ծօ՛ ֆըլտըր կէօզ, դուն ալ պան
մը ըսէ ամա՛, չըզըլէ չեկաւ, կըսէ տու-
տուն երիտասարդին, որ քիշ շատ ծանօթ էր
թաղին մէջ իր սիրտին շահատակութիւննե-
րովը:

— Ես ըսեմ ամա ետքէն բիւշման չըլլաք,
չիւնքիւ ըսելիքս բէք տիւզ պաստի չէ ...
կըսէ Լեւոն քիթը բերանը ծածկելէն:

— Զարար չունի, հէրիք է քի չըբըսըզ
բան մը չըլլայ, ըսէ՛ ծօ՛ Լեւոն ...

— Ինծի նայէ տղաս, էքսիկ էթէկ շատ
կայ, չորս դիտ նայէ տէ անանկ դուրս տուր,
մենք մեզի չենք, աչկ պանալու բաներ չեկ-
լաս յառտես ...

Լեւոն բերանը կը բանայ:

Անկարատան կէլի գոյուն
Քեօսեպէֆ սիր սրչա պոյուն
Պեօպիւլէնմէ ա՛ իսիւիւմ
Շու պէլիթիւ սանա օյուն:

— Նա՛, չըսի քի առկոց առակ պան մը
կըսէ տէյի, հիմա տեսար կերած ապուրդ...

— Ինչ ըսեմ մախսուս չըսի՛ եա, չօզ
չէյ, քաշէ նայիմ քա, որին ինչը պիտի եկ-
լայ ...

— Մի քաշէր քա՛, աթլամիշ ըրէք:

պաշխա մը թող ըսեն, բիւսթիւթիւն ըռէ-
զալէ՛թ է ...

— Զըլար ճանըմ, քըֆը կը փախչի ...
քաշէ քա աղջիկս ...

— Մատնի մը ...

— Բա վո՛ւյ ... կէտինին տիպը չասնիւ,
Նոյեմզարինը չէ՛ ..., խըսըմ ալ պիտի ըլլաս...

— Ծօ՛ շան զաւակ, կտար կտար տէ ադ
պէյիթը՝ միտքդ ինկաւ ... քէօստէպէկը
դուն ես ... բի՛ճ ...

— Ա ... մի խըռս ... մախսուս չըրի՛
եա, պերնիս ան եկաւ ...

— Պերնիդ ատ գալուն, սօլուճաններդ
գային տէ կուպէկու ելլայիւ հէմէն ... սա
նայէ սիւրիւ մը հալխին մէջը ըռէզիւ ըրաւ...

— Պէ ճանըմ, վիճակ է ասիկայ, մուլթ-
լախ մէթիլէ չպիտի ըլլա՛ր ա ... չօզ չէյ,
հայտէ պէյիթ պէյիթ, դուն ըսէ Ուսկուկ,
կէնէ դուն կէնէ դուն ...

— Էյ մեր քօքօնա Թուանտաֆիլան ալ չըսէ՛ր
աճապ ... կըսէ Ուսկուկ յոյն զրացնուհին
ցոյց ապով:

— Քալէ պէն պիւմէ՛զ ... թի նարօ ...

— Հայտէ ճանըմ ույտուր, հէլպէթ պի-
լիւսին, պիր չէյ տէ սէն սէօլէ կըսեն ամէնքը
մէկ բերան, ու քօքօնան կտարտուելով կսկսի,

Մեքսանպիլի ինէ գօզմու
Աղաբիմու իսէ Ֆօզմու
Էֆիթօ բու աղաբիսա
Թօ սիֆումու քօ աֆթօզմու:

— Ամա՛ն ... ասոնք ալ աֆթօզմուդ ա-
տըմ չեն նետեր, չորս սըրային մէջը պիւէ
մէկ հատ մը ետէլէշտիրմիշ ըրաւ ...

— Հանէ նայինք աղջիկս, ամա աղուոր
մը խառնէ տէ անանկ:

— Ծամաըզ կէօզիւկիւ չէրչիվէ մը ...

— Էյ թամամ ..., Նունեա տուտուինն
է ... կիտի սէնի կիտի ... սա նայէ, աս
տարիքին մէջը աֆթօզմու ալ եղար հէ՛ ...

— Իմին աֆթօզս մէղառճի Մանուկն է,
իշտէ թամամ ելաւ ա՛ ...

— Ասծուծու աչկին մեռնիմ, սըրան ին-
ծի եկաւ նէ մեռելկոխ պէյիթներ ըսին ...
հայտէ ո՛վ պիտի ըսէ, թէք պէյիթ մըն ալ:
Միւսիւ Լեւոն առաջ անցնելով,

Գօյուն կքի սօզուգա
Մայիլ օլթում շու գրգա
Շուրաւա պուլունանըն
Հեքսիինն ազլը գրսա:

Միւսիւ Լեւոնին այս քառեակը՝ վիճա-
կին յարմար վիճակն էր:

ԼԻԼԱ

Արտատեսք ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳԻ. Ե. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապը-Սիի հասցէսի քիւ 52.

